մեծս հազար ամաց ի վեր ամէն եարուից կու
կրեն եւ չի հատնիլ, ոչ կու պակսի:

Եւ սակաւ մի յառաջ էր կղզի մի փոքր,
ուր կայր հինգ տուն հայի: Կացաք երկու ա- 100
միս յէանջուկն, զոր բազում մարդասիրու-
թիւն ցուցին մեզ անդր Հայքն:

Եկաք անտի ՊԱԼԸԲԻՍԱՐ· որ եւ սա յոյժ
բարձր լերանց վրայ չինած էր եւ յոյժ քա-
ղուտ, որ դալար չէրեւէր: Եւ կացաք անդ 105
երկու շաբաթ, զի կայր քառասուն տուն հայի
եւ էրէց մի:

Եւ անտի եկաք ի մեծահռչակ քաղաքն
ՄԱՆԻՍԱՅ, որ էր թախտ շահգատայից, այս
է որդոց թագաւորաց, զոր անդ յղեն մինչեւ 110
ոնցի եւ զարդասցի: Եւ կայր այս քաղաքս
երկու եկեղեցի Հայոց, փայտէ տան պէս·
մինն ի վերն լերան վրայ, եւ մինն ի դաշտն·
կայր եպիսկոպոս մի անունն Յակոբ Ցրնօղցի,
եւ երկու էրէց եւ քանի հարիւր տուն հայի· 115
զոր սիրով ընկալան զմեզ եւ յոյժ մեծարե-
ցին: Կացաք անդ երկու ամիս եւ տասն օր,
զի էր յոյժ մրգաւէտ եւ բարեբի, լի եւ առատ
ամենայն պտղովք:

Եւ անտի կէս օրն հասաք ԻԶՄԻՐ քա- 120
ղաքն Նիկոդայոսի: Եւ սա էր ծովու եալու
մեծ սկալայ, որ Ստամպօլայ, Մսրայ, Վա-
նատիկու, Սաքրզու եւ այլոց կէմիք կու խա-
զային եւ բազում Ֆռանկք եւ Հոռոմք կային
անդ: Եւ սա եւս յոյժ պտղատու եւ մրգա- 125
շատ· իսկ սարուձորն ամէն ձիթենիք եւ